

Հրատէր ՚ի Կ. Պօլիս Երևելի պաշտօնէից  
եւ գլխաւորացն աշխատեաց :

Վերոգրեալ խնդրոյն կարեւորութեան համեմատ, հարկ եղած ատեն բոլոր իսլամ ժողովուրդք միաբանութեամբ բնդհանրապէս ղենուորելու, միաբանական կապերը ամրացնելու, և ուղիղ դիտաւորութեամբ Տէրութեան և օրինաց վերայ խորհելու համար արեւելեան և արեւմտեան (Առաքիլ Է-Րոմիլ) եւ Արքանիայի (Առաքիլ-ի) կողմերը գտնուած երեւելի պաշտօնեայք, իշխանք եւ կուսակալք քաղաքապետաց եւ այլ մեծամեծ եւ երեւելի անձինք հրաւիրուեցան ՚ի Կ. Պօլիս : Նոքա եւս անմիջապէս ճամբայ ելլալով ձեռնդէլ եղլլէ ամայ սկիզբները Մայրաքաղաքը հասան, և ըստ պատշաճի նախարարաց տունները հիւրընկալուեցան, եւ ապա սրտուէր հրամանի եղաւ ըստ հարկաւորութեան պէտք եղած և ուղուած ատեն պատերազմի պիտոյք հոգալ, և նոքա յօժարութեամբ յանձն առին, իւրաքանչիւրն խոստացաւ իւր երկրին կարողութեան համեմատ զօրք, պաշար և այլ կարեւոր պիտոյք հոգալ եւ տալ : Յետ այնորիկ առաջի մեծի Վէզիրին իւրաքանչիւրն ըստ արժանաւորութեան իրկաներ գլեցան, և պատուաւորներէն ոմանք Արքային ներկայանալով խոստացան փութաջան յօժարութեամբ Տէրութեան ծառայել, և ամենեցուն ծանուցագրեր տրուեցան, կողմ և պատրաստ գտնուիլ, և ապա իւրաքանչիւր որ իւր տեղը վերադարձաւ :

(Շարունակելի է)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄՆ  
ԱԶԳ. ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Վանայ Գեր. Առաջնորդ Արժ. Տ. Թագէտս վարդապետի 1850. դոստոս 31 ամսաթիւ մէկ Տեղեկագիրը կը ծանուցանէր, թէ Վանայ Խօշապ նահանգի բնակիչներէն Մարտիրոսեան Աւետիս անուն անձը, որ ասկից ապան և հինգ տարւոյ չափ առաջ իւր հայրենիքը ամուսնացած, միայն երեք ամիս իւր կնոջը հետ անցունելէն յետոյ՝ զանի թողած և մեկնած էր դաւաճէն, մինչեւ հիմա հոն չը դառնային զատ՝ իւր մանկամարդ կիներ երեսի վրայ թողեր և իրեն նկատմամբ բնաւ տեղեկութիւն մը չէ հաղորդեր՝ ոչ իւր կողակցին և ոչ այլում:

Արժ. վարդապետը զայս կը ծանուցանէ, որպէս զի պէտք եղած տընորէնութիւնն ըլլայ յայսմ մասին :

Արդ Կոստանդնուպօլսոյ Կեդր. Վարչութեան Կրօնական Ժողովոյն որոշմանն համաձայն ներկայ Պաշտօնական ծանուցումն կը հրատարակուի Ազգային բովանդակ լրագրաց մէջ, որպէս զի ո՛ր կը ծանաչէ յիշեալ Խօշապի Մարտիրոսեան Աւետիսը, եւ գիտէ՝ թէ ուր է նա, և ի՞նչ կ'ընէ, կամ թէ մեռած է թէ կենդանի, անմիջապէս Ազգ. Պատրիարքարանիս իմաց տայ ՚ի գիտութիւն և ՚ի պատշաճ տնօրէնութիւն :

17 Մայիս 1876 :

(ԿՆԻՔ)

## ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Պերոնիէն գրած նամակ մը չաղաած :

“Որչափ որ մտադիր էի այս տեղէն ելլալէն յետոյ երթալ նախ՝ Այն-Լուր, ուր կը գտնուի Ժեզուիթաց մեծ